

կալան ինդիքը յարուցել է ինքը տաճիկն եւ այժմ՝ կամնուամ է արեան մշջ խեղճել հային եւ նրա ինդիքը:

«Մի կողմը թողնելով այն՝ որ ամենայն ձնշումն ընդգիրմութիւն է յառաջ բերում ամենայն հալածանք ապատամբութիւն է ձնեցնում պատմական փաստ է, որ 1878 ին տաճիկն ինքն ստեղծեց հայկական ինդիքը: Եթզ թեղինի վեհաժողովում պիտի վճռումք արեւելեան քրիստոնէից վիճակը, հայ եպիսկոպոսներ գնացին նվորպա, ամենովեր հայցեցին ազատութիւն հայերի համար եւ տաճիկ կառավարութիւնը շարգելց այդ շարժումը, նաև թոյլ տուաւ որ իր հայութակ եպիսկոպոսներ քողոքեն իր դէմ, հայոց պատրիարքը հարիւրատը քառերից քաղկացած քողոքներ հնուազրէ Կ. Պոլսից առ իր պատուիրակներն: Ոչ այս չափ միայն, երբ այդ քողոքաւոր պատուիրակները յետ դարձան Կ. Պոլսիս նրանց հարցնող անգամ չեղաւ, թէ ուր էին գնացին և ի՞նչ էին արել: Հաստատ պատմական իրողութիւն է, որ սուլթանը գժգոհ այդ գործից մեծ վեզիրին պատասխանեց, շվեհափառ Տէր, այն ժամանակ պէտք էր մեզ, որ հայերն էլ ազատութիւն ուղիւնի, որպէս զի խանգարէ էնք բարզարների ազատութեան, իսկ այժմ ով է մեզ ստիպողը բարենրոգումներու, եթէ հարկ լինի հայկական խնդիրը վերացնելու, այդ մեզ համար շատ դիւրին է՝ միշտ խոստանալ բարենրոգումն և երբէք չըկատարել:

Այժմ ինչպէս երեւում է եկել և ջրնջման շրջանը և պէտք է խոստովանել, որ տաճիկը մեծ ճարտարութեամբ լրացնում է իւր ծրագիրը, մինչ եւրոպայի քրիստոնեայք միմեանց են վերագրում հայկական իննդիք ծառակեցլը: Հայոց ինդիքը ոչ մի եւրոպական պետութեան ինտրիգ չէ, նրան ծնել է տաճիկը ...: Այս ժանրակշիռ փաստաբանութիւնը հերքում է այն սովորական մեղադրանքները, որ բարգուում են մի կողմից հայոց, միւս կողմից եւրոպայի ազգերից մանաւանդ Մնդիացւոց դէմ: Քրիստոնէից կոտորածի պատասխանը Միջին դարերում անշուշտ խաչակրաց արշաւանք կը լինէր. իսկ այժմ, այժմ սուլթանը Կ. Պոլսի կոտորածի երկրորդ օրն պարզե է ստանում եւրոպայից:

Մի Արեւելագէտ եւրոպացի միշտ նկատում է այս առմիւ թէ ի՞նչ կանէր միացեալ խալամանթիւնը եթէ երկրիս մի անկիւնում այն խայտառակութեան ենթարկուեր խալամանթիւնը, որպիսի խայտառակութեան

ենթարկուում է այսօր քրիստոնէութիւնը չայսատանում: Միթէ յակամայից պիտի խոստովանենք որ իսլամն աւելի բարոյական զօրութիւն ունի, քան ներկայ քրիստոնէութիւնը:

Քան և մի լիցի: Հայերս հաւատացող ժողովուրդ ենք և երբ ամենայն որ ազօթերով ասում ենք. «Եղիցին կամք քո», դիտենք որ ՆՈՐԱ կամքը բարի է և բարի էլ կը լինի:

Բայց «մինչև ցերը Տէր», այս է մեր մարդկային անհամբերութեան արտայայտութիւնը որ երկու տարի է ի վեր արիւն արտասուլով կրկնում ենք: 1895-ին կոտորածներին այժմ յաջորդում են 1896-ի աւելի սոսկալի կոտորածները, արդէն իսկ սկսուել է երկրորդ կոտորածը, որ անհամար զոհեր է տարել Կ. Պոլսում: Ակնում, կեսարիայում և Վանում ամենայն օր նոր նոր կոտորածների լուրեր են ստացուում իսկ մեր աշքերի առաջ մեռնում են անանկ և հալածական գաղթականները....

Երկրը քարուքանդ, ժողովուրդը մորթուած և ցիր ու ցան, եկեղեցիք պյուտած և վանքերը կործանուած, քահանայք ու առաջնորդք սպանուած, պատրիարքն աքսորական և Սուրբակն անգամ զլորուած, ի՞նչէ արդեօք սրա վերջը, Տէրն ինքնին միայն զիտէ և սուրբ է Ծորա կամքը. իսկ մենք համոզուած ենք, որ մեզ հետ եղող ճշմարտութիւնը պիտի փրկէ մեզ ։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆՆԵՍՅՅ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

ԳԱՂՅԱՆ ԽՈՐԴՐԱԿԱԽԱ Ա. Ն. ՄԱՍՈՒՈՎԻ ԵՎ ԽԵՂԵՑԻ ԱՅՏՈՒՄՆՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆ.

Ամսոյ 14-ին՝ շարամ օրը Ա. Կ. Հափառ Հայրազերը հեռագիր ստացաւ տար դաւանութեանց վարչութեան տեսուուշ գաղտնի խորհրդական պ. Ա. Ն. Մոսոլովից, որ արդէն ժամանել է Թիֆլիզ և յօյս ունի երեքշարթի կամ չորեքշարթի ներկայանալ նորին սուրբ Օծութեան էջմիածնում: Նոյն օրն հեռագիր ստացաւ և Արաստանի ու Խերեթի առաջնորդ բարձր սրբազան Գէորգ արքեպիսկոպոսից, որ բարձրաստիճան հիւրերն այցելու նորին Սրբազնութեան, միասին գնացել են ի տեղ վանքի մայր եկեղեցու, ներսիսեան հոգեոր գլուխոցին և փակուած Գայիհանեան ու Յովնանեան գլորցներին. ապա սրբազան առաջնորդը փոխ այցելութեան գնալով կիւրակէ օրուան ճաշի է հրամբել Պետերբուրգից ժամանած հիւրերին, որոնց սեղանակից պիտի լինին վարչական բարձրաստիճան անձինք և անուանի քաղաքացիք: Պարու Մոսոլովին և իշխան Աւելանմակին կիւրակէ գիշեր Թիֆլիզից ուղևորուելով երկուշարթի երեկոյեան հանում են Երևան, ուր ընդ առաջ եր ուղարկուած Ա. Կ. Հափառ Կաթողիկոսի կողմից Գէորգիական բարձրաստիճան անձինք և անուանի քաղաքացուրը:

Երեքշաբթի ժամը 10-ին Երևանից ելնելով
Ա. Էջմիածնն հասան ժամը 11-ին, Դրսի դարպա-
սի առաջ Վեհափառ Կաթուղիկոսի կողմից ող-
ջունեցին հիւրերին Գեր. Գրիգոր սրբազն և
բարձր. Նահապետ քարդապետը, որոնց ուղեկցու-
թեամբ մոտան նորա Մայր Տաճարն և ծունդ խո-
նարհելով համբուրեցին Էջման սեղանն Ա. Վեհա-
պետի արտաքին գալիքնում ամրող և պիտի պատական
դասը ի միասին ընդունեցին հիւրերին որոնք ապա
ծաղկեայ այլաման անցնելով նորին Օծութեան ամ-
առան. Առաջին սեսութիւնը մօտ մի ժամ տեսեց,
ապա հիւրերը ցանկացան գիտել վանքն ու ձեմարանը.

Վեհարանից իջնելով պ. Մոսոլովը ցանկա-
ցաւ Գերապ. Երեմիա սրբազնին այցելել, որով-
հետեւ մայրաքաղաքում թագադրութեան միջոցին
խոստացած էր Կոռան Ա. Էջմիածնում այցելել, Կար-
ճառեւ այցելութիւնից յետոյ հիւրերը գիտեցին
Ներսիսեան լիճը, նոր թամարանը. ս. Գայիհանէի
վանքը, անտառն և ապա գնացին ձեմարան։

Ճեմարանի բակում հիւրերին ընդունեցին՝ սե-
սունդ ու իւր օգնականն և առաջնորդեցին գեպի
հագիսարանն, որի մուտքի առաջ ուսուցիչները ժո-
ղովուած էին. Մի առ մի ուսուցչաց հետ ծանօ-
թանուոց յետոյ մտան գահիկն և սկսան աշա-
կերտներին ուսուցերէն հարցուիրոք անել, առանձ-
նապէս տաճկահայ և պարզակահայ աշակերտներին
էին գիտում, որոնց պատասխաններից և գոհ մնա-
ցին. Աշակերտներն երգեցին «Տէր պահեա» քառա-
ձայն, Փողովուելով խորհրդաբան աւելի ևս մօտի-
կից ծանօթացն ուսուցչաց հետ, ապա գիտեցին
մատենադարանն և գասարանները մտնելով կրկին
սկսան հարցուիրոք անել. Դասարաններից ենելով
գիտեցին ննջարանն և գոհութիւն արտայայտելով
հեռացան։

Ժամը 2-ին վեհարանում հանդիսաւոր նա-
խաճաշ էր պատրաստուած, որին ներկայ էին սինօ-
դական հարդ և եպիտի պատապասական դասը.

Նախաճաշի ժամանակ նորին Վեհափառութեան
առանձին սեղանին սպասաւորում էր Կոռիւն արե-
դան, իսկ նահապետ և Աշոտ քարդապետները
յոտնիյաց սպասում էին Վեհափառի Հրաման-
ներին. Վեհափառ Հայրապետը բաժակ առնե-
լով առաջարկեց նույն Մատութեանը թւ-
գալուր կաթուր եւ կաթուր ան կենացն, ապա
գաղտնի խորհրդաբանն պ. Մոսոլովը և մենայն
Հայրապետի կենացը. Բարձր. Սուքիս սրբա-
զանը պ. Մոսոլովի կենացը. Գեր. Սարգիս սրբա-
զանը իշխան Ուխտումնու կենացն և ապա կրկին
պ. Մոսոլովը սեղանակից ս. Հարց կենացը.

Նախաճաշից յետոյ պ. Մոսոլովն ու իշխան
Ուխտումնու բաւական ժամանակ հանգստանալուց
յետոյ հրաժեշտ տուին խոստանալով միւս օրը վե-
րագառնալ և շարունակել բանակցութիւնն.

Յաջորդ օրից յետոյ ժամը 2-ին հիւրերը կրկին
ժամանեցին Ա. Էջմիածնն և անմիջապէս ընդունու-
ելով նորին Վեհափառութիւնից լսեցին նորին Օ-
ծութեան բոլոր բացադրութիւններն և կարծիքները
կարևոր խնդիրների մասին, Բայց իր գրորդական
խնդիրներից բանակցութիւններ տեղի ունեցան եր-
կու շատ կարևոր խնդիրների մասին, նորին Վեհա-
փառութեան տուած բացադրութիւններն այս առ-
թիւ պարզեցին խնդիրներն և պ. Մոսոլովը խոս-
տացաւ նորին Վեհափառութեան հայեացքներն ու
ցանկութիւններն հասցնել ուր հարկն է:

Անկնդրութիւնն աւարտուելուց յետոյ հիւ-
րերն այցելեցին սինօդի շենքը, տեսան թանգարանը
և մասանց խորանը, համբուրեցին ջերմեռանդու-
թեամբ ս. Գրիգոր Լուսաւորչի աշխ և գարձան Վե-
հարան, ուր թէ վայելելուց յետոյ նորին Վեհա-
փառութեան օրնութիւնն ատին և ուղևորուեցան
Երևան։

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒԹԻՒՆ

Ամսոյս վերջին կրկին բացուեցաւ տաճկահայ
գաղթականութեան հոսութը գեպի Պարս, Սարի-
ղամիշ, Իգդիր և Պարսկաստանի վրայով գեպի Հիւ-
նախիջևան. Սեպտեմբերի կիսիցն սկսած մեծ գաղ-
թականութիւնն եկաւ գեպի Երևանի նահանգն Ար-
ծաշից և Վանից, որի բնակիչներից հարիւրաւոր
անձնիք միանալով ուսուաց հիւրատոսի կարաւանին
եկան Ա. Էջմիածնին.

Գաղթականութիւնի անընդհատ հոսանքը գեպ չէ
վերցացել, սեպտեմբերի կիսիցն սկսած Ա. Էջ-
միածնի պատապարի է օրական 500—600 գաղ-
թականն որոնք միշտ տեղի տալով նորեկներին, ցը-
րուում են գեպի կենդրուական քաղաքներն ու հա-
յաբնակ գիւղերը. Առանձին գովութեան արժանի
են հայ աղքատ գիւղացիք, որ երկար ժամանակով
ինամուտ են բազմաթիւ ընտանիքներ, Գաղթական-
ները սննդի պահանութեան պատճառով ննակայ
են զնանական հիւրանդներ են ինամուռում ճեմարանի
բժշկութեան մէջ տիքը. Վեհափառ Հայրապե-
տի հրամանով գանքի գիւղի միջի տունը, նախկին
ողաց գլորոց, փափարկուել է հիւրանդանոցի, ուր
տաճական հիւրանդներ են ինամուռում ճեմարանի
բժշկի ձեռքով. Գաղթականութիւնի մի մասն ևս վան-
դի գոմանոցումն է, որոնց վրայ հոգածութիւն
ունեն ճեմարանի սարկաւագ աշակերտները։

Գ. ՃԵՄԱՐԱՆ

Աշակերտաց ընդունելութիւնն արդէն աւար-
տուել է ճեմարանում այս տարի աշակերտաց թիւն
200-ից անց է և գեռ շատերը բաղնում են ճեմա-
րանի դռները։

Մանկաբարժութեան դասընթացն այս տարի
պիտի վերսկսուի կրկին նախկին չափով. արդէն իսկ
հրամբուած է մեր միակ մանկավարժ պ. Ա. Ման-
գինեանցը, որ հոկտեմբերից կը սկսէ իւր դասախո-
սութիւնները։

ՏՊԱՐԱՆ ՄԱՐԱՆ ԱԹՈՒՈՅՑ.

Մայր Աթոռիս տպարանի գրաշարանոցը, որ
մի ամիս առաջ փակուած էր, կրկին բացուեցաւ
ամսոյս 23-ին, Պ. Վ. Աթոռիսնը հաստատուեցաւ
պատասխանառու անձնաւորութիւնն տպագրակոն
մասի։

Ա. Էջմիածնի օրացոյցն արդէն լոյս է տեսնել
և շուտով ի վաճառ կը հանուի։

Տպարանական ժողովի անդամ՝ շնորհ, Պ. ու կաստառկառագը Առաքել պատմագրի աշխատութեան երրորդ հրատարակութեան առթիւ խնդրեց և ստացաւ թյոյլուութիւն Վ. Ե. Հափառ Կաթուղիկոսից Առաքել վարդապետի գերեզմանի վրայ մի վայելու դամբարան կառուցանելու համար ժողովարարութիւն անելու Արդէն իսկ միաբանութեան անդամների մէջ հանգանակուած է յիսուն ռուրլու շափ գումար, եթէ Ս. Էջմիածնից բացակայ միաբաներն ևս նպաստել ցանկանան այդ դամբարանի շինութեան, կարող է մի վայելու շիրիմ կառուցուել թշուառ ժամանակների ողբերգակ պատմագրի գերեզմանի վրայ:

Ա Ա Խ Ս Ա Հ Ա Յ Բ.

Բ Ե Ս Ա Ր Ը Բ Ի Ո Ւ Թ Ե Մ.

Խրիմու ս. Խաչ վանքի վանահայր Գերապ. Խորէն եպիսկոպոս Ստեփանէն հայրապետական հրամանով թողնելով վանահայրութեան պաշտօնը, ժամանել է Ս. Էջմիածնի:

Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքի վանահայր Արք, Եփրեմ վարդապետն հրաժարական է տուել իւր պաշտօնից:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Բ.

Կ. Պոլսի կոտորածից յետոյ բոնի կերպով մօտ 20,000 հայ արսորուել և գուրս են արուել քաղաքից, ինչպէս հետզիետէ տեղեկութիւններ են ստացուում, գաւառները քշուած հայերը մորթուել են ճանապարհներին:

Արդէն իսկ ապացուցած փաստ է այժմ: Որ Կ. Պոլսի յեղափոխութիւնն և Օսմանեան բանկի վըրայ յարձակումն ամիսներ առաջ պատրաստել է տաճկաց ոստիկանութիւնը: Թէ ի՞նչպէս է Ելոզի պալատը այս խաղը խաղացել, մանրամասն կերպիւնիքարել է «Քրանկիփորտէր Յայտունգը»:

Պատրիարքական տեղապահ կարգուած Բարդուղիմէոս եպիսկոպոսը հրաժարական է տուել, ինչպէս հաղորդում են լրագիրներն:

Տաճկաստանի գաւառներից փախստական եկողները այնպիսի սարսափներ են պատմում: Որ պատմութեան մէջ իրենց նմանը չըունին: Ուուրիային մերձաւոր գաւառներում սովի և հիւանդութեան երկիւղներ կան:

Վ Ե Խ Ե Բ Ա Կ Բ Ե Բ

1895 աղէտապի տարին անցաւ, բայց այդ աղէտների սովորական նետեանիները դեռ շարունակուում են: Այդ սեւ տարին պէտք է գոնէ մի սեւ յիշատակարան եւս ունենայ. ահա այդ սեւ յիշատակարանի նիւթերն են, որ „Արարատ“ պարտատը է հրատարակել իերեւն թերան չայտառանեաց եկեղեցոց, որպէս զի գոնէ պատմիթեան մէջ անմահանան այն նահատակները, որ իրենց արինը վարդապետներին քրիստոփ անուան համար: Եիշատական արդարոց օրնութեամբ եղիցի:

Ի.

ՄԸՆՑ ԱԿՎԱՐԿՈՒԱՌ ՏԵՂԵԿԱԳՐԻՑ
ՔԱՂԵԿՈՒԱՌԸ Բ.

Եէի համարձակեր, սոյն այս տեղեկագրութեան կամ լաւ ևս է ըսել թօթարերութեան տիտոր պաշտօնը կատարել և նորանոր վշտեր յաւելու Զեր Հազար ու մէկ վշտերով ծանրաբեռնեալ վիրաւոր ու փափուկ սրանի վրայ, այլ այժմի գիտնալով թէ անշուշտ համար են Զեր այդ բիւրաւոր ու սիրու նահատակութեան գոյժերն: ուստի հարկ անհրաժեշտ գատեցի այդ արկածեալ ներու մասն ստոյց և ըստ կարի մանրամասն տեղեկութեան հայութեան կազմութեան վեկուութեան կազմութեան հայութեան վեկուութեան անդամներ հաղորդել,

Տեղեկագրութեան սկիզբը, որպէս յայտնի է, համառութիւն անցած եմ այս կուսակալութեանց վըրայէն՝ յորս բնակեալ Հայք թէկ անկասկած զի՞ եղած են անգութե բարբարոսութեան սրածութեանց: այլ սակայն մեզմէ բաւական հեռու լինելով կարելի չէ մանրամասն տեղեկութիւններ ստանալ, իսկ կարույց, Բաղցայ, Տիգրանակերտի և Խարբերդի կուսակալութեանց Հայոց վրայ, որը սահմանակից են Տարոնոյ և Կենձի, ըստ կարի յաջողեցանք աւելի մանրամասն և ստոյց տեղեկութիւններ ձեռք բերել հոս և հոն յատուկ մեր կողմէն զրկուած կերպեալ բերուերու և թէ, ըստ սովորութեան, աշնան կողմէ Խարբերդ և Տիգրանակերտ, ոչնար վաճառելու հանօթ հայերու և զրացի բիւրերու միջոցաւ:

Սկսիկ ուրեմն մի առ մի թուել այն կուսակալութիւններ, որոց մէջ բնակեալ թշուառ հայեր զի՞ եղան իսկամ բարբարոսութեան անգութ որածութեանց:

Ա. Հալէպի կուսակալութեան մէջ.

1 Հալէպ. 2 Անթաքիա իր չորս մեծ գիւղերով. 3 Քիլիս. 4 Պիրեմնեկ. 5 Անդիպ իր Մեղադար գիւղով. 6 Մարաց իր գիւղերով. 7 Այնթապ իր գիւղերով. 8 Աւրփա իր Կարմունջ, Հովգակ, Պոզովայ և Պուճաղ մեծ գիւղերով. 9 Ճիպին գիւղ մերձ Հումկայի, ասոնք մեծաւ մասամբ սրէ անցուած և կողոպտուած են.

Բ. Աղանայի կուսակալութեան մէջ.

1 Հաճին շրջականերով սրէ անցուած և կողոպտուած:

Պ. Կասարիա իր Թալաչ և Էմբէկ աւաններով և շրջականներով սրէ անցուած և կողոպտուած:

Պ. Սեբաստիա իր շրջականներով, Կիւրին, Տիգրիս, Զարա, Շապին Գարահսար իր Թամզարյ և Շվշար Օվայ աւաններով և շրջականներով, Եղողկիս, Ամասիա և Մարտուն իրենց շրջականներով սրէ անցուած և կողոպտուած:

Ե. Տրապիզոն իր շրջականներով և Սամսոն կորուած և կողոպտուած:

Զ. Կարին օրէ անցուած և կողոպտուած, Կարնոյ գաշտ կողոպտուած և տեղ տեղ մարգասապանութիւնը եղած, Քամերդ իր շրջականներով սրէ անցուած և կողոպտուած: Հասուն-Գալէք Ս. Աստուածածնի վանք կողոպտուած և այրուած, միաբաններ սրէ անցուած և վանահայր Տիմոթէէս վաճառեած և այրուած: Քասեն կողոպտուած և տեղ մարգասապանութիւններ եղած, Խուռա իր գիւ-

դերով կողոպտուած և տեղ տեղ սրէ անցուած, Դերջան իւր գիւղերով կողոպտուած սրէ անցուած և մասցեալն Առաջորդական փոխանորդ Ներսէս վարդապետի հետ ի մրասին բռնի մահմեդական ըրած:

Երդնկա իւր գիւղերով սրէ անցուած և կողոպտուած, Քեամախ իւր գիւղերով կողոպտուած և սրէ անցուած:

Եթզի տեղ տեղ կողոպտուած և մարդասպանութիւններ եղած:

Է. Խարբերդի միայն Մէջրէ ըսուած թաղն ազատուած միւս թաղերն ամրող և բողոքական ազգայնոց նշանաւոր Գօլէճն ուսանողներով ի մրասին սրէ անցուած, կողոպտուած և այրուած: Ասոր Սինանուր Հիւսենիի, Հարուսին, Քէսէրիի, Մորենիկ, Հողմէ աւաններն և բաղմահայ գիւղերն առ հասարակ սոսիալի տեսարաններով սրէ անցուած, կողոպտուած և տուներն այրուած:

Քալու քաղաք իժգտական արարածներով ջնջուած և կողոպտուած, նոյնպէս իր շրջակայք գտնուած Կուլուշը եր, Խարմճա, Եւնիքէօյ, Հապհապ, Ժէթ, Խոչմաթ, Սողանլու, Մէջրէ, Վիրիի, Թըրթան, Լախան, Նրճարան, Սարուխամիշ, Ապրդենի, Գարուաչմալ եւն գիւղեր սրէ անցուած, կողոպտուած և այրուած:

Խարբերդի և Քալուիսրէ անցուած բոլոր գիւղերու թիւը 93 է, սակայն ամենու անունները չկրցակ իւմանալ տակաւին:

Խարբերդի և Քալուիսրէ վերջիշեալ գիւղօրէից սպանալնեալներու գիակներ ժաղող շգտնուելուն պատճառաւ, ցարդ հողի երես մնացած են ի կեր թունոց և գաղատաց:

Խարբերդի կոտորած ահուելի եղած է, Ասոր Սողանլու գիւղի կոտորածի ժամանակ, տեսնուեր են հայ մանկամարդ կանայք բռնաբարուած սպանուած և կանացի համեստութեան հակառակ մերկ և արիւնամաթաղ վիճակի մէջ ձգուած և իրենց գիեցիկ մանուկներ ոմանք զիմէն, ոմանք բազէն և ոմանք ալ սրունքէն կտրուած և մեռած, ոմանք ալ տակաւին ողջ փակուած իրենց անշնչացեալ մօր սառած կուրծքին, կը ծծեն եղեր նոցա արիւնաներկ և ցաւքած ստիճանք մերթ ընդ մերթ աղիողորմ ճիշեր արձակելով:

Այս և ասոր նման ուրիշ վայրագ և քսամնելի խժգութիւններն ազատուելու համար, բարերդից բազմաթիւ կանայք ևս իրենց մանկներ գրկած, Խարբերդի բոյէն հոսող ճորս գետի մէջ կը ծծեն զիմէնք և ջրամոյն կը լինի: Այս ամէնը մեղ պատմեցին Խարբերդ, քրդաց հետ ոչխար վաճառելու գնացող և վերագրածող հայեր, որբ ականատես եղած են այս սոսկալի տեսարաններուն: —

Նաև Կապան մատեն, Երարկեր, Ալի, 2արսաննագ, 2մշկածագ, Մալաթիա, Պէհեսնի, Հասան Մանուր և Ազիման քաղաքներ և աւաններ իրենց շրջականից սրէ անցուած և կողոպտուած:

Ը. Տիգրանակերտի քաղաք սրէ անցուած, կողոպտուած և տներն ու խանութներն այրուած:

Կառավարութիւն տեսներով որ քրիստոնեայք սոսուար թիւ մը կը կազմեն Տիգրանակերտի պարսպին մէջ, ուստի օր առաջ Տիգրանակերտի շրջակայք գտնուած և մը լաւ ցի Եշիրէթ ըսուած համիտիկ հեծելագնդին պատկանող ցեղը, որ արարական տարագ կը կրէ և որ 3—4000-ի կը հանի բերել կուտայ քաղաքը և որոշեալ օրը հրաման կը

դրուի, Այս քիւրդեր՝ Քաղցած գայլերու վոհմակի մը պէս, իրենց առուտուրին հետ զբաղող միամիտ և անդէն Հայերու վրայ կը յարձակին խանութներու մէջ, և կոկոր սոսկալի ջարդը՝ արդէն քաղաքը պարսպապատ է, փախչելու հսար ու ճար չկայ, վեց որ շարունակ քաղաքը պաշարման մէջ կը դրուի, որով քիւրդեր կը կոտորեն թէ խանութներու և թէ աներու մէջ գտնուած բոլոր հայերն ու քրիստոնեաներն և միւս հասարակ քրդերն այ կը կողդպտուն և կայրեն տուներն ու խանութներն, Տիգրանակերտն այսպէս ջնջելէ յետոյ, կանցնեն քաղաքին կից յայնկշյո ծիգրիսի գտնուած Խըմըրպէջ աւանն, ասոր բնակիչք յուսահատ գիմադրութենէ մը վերջ կապատակին իրենց քար ու կիր եկեղեցին և պատու հաններէն զիրենք կը պաշտպանեն. սակայն քիւրդեր վերջապէս կը յաջողն եկեղեցւոյ տանեաց վրայ բարձրանալ և տանիքը ծակելով յարու ու կաղեալի լեցնել ներու և կրակ տալ որպէս մէջ գտնուածներն ամբողջ կայրին կայրեն կը մրտնեն տուների, հոն գտնուածներն կիւն տղայ, աղջիկ, զամէնն ալ աշուելի տեսարաններով կապանեն, տուները կը կողդպտուն և այրելով կը հեռանան:

Տիգրանակերտն ու Խըմըրպէջ այսպէս ամայացնելէ վերջ, այդ վայրենի գաղանը կը ցրուին Տիգրանակերտի լայնած աւալ գաշալ, որ ընդհանրապէս ներբեն գաշտ կանուանալուի, և անօրինակ խըմըրդութիւններով և բարբարութեամբ կը ջնջն ամբողջ հայերն կառեալակ նոցա լաւ աղջիունք և կանայք, կը զողոպտեն նոցա բոլոր ինչքն ու սասցուածք և հոյց ճարպ կընեն անոնց տուներու ու մնակարաններու աւելրական կոյսա մը գարձնելով զայնս, եւ եթէ տեղ տեղ աղատուողներ ևս եղած են, զանոնք ևս քաշնայիւք և եկեղեցիններով մէկտեղ բանի իսլամ ըրած են, այսպէս որ Տիգրանակերտի այդ լուդարձակ աշխարհի մէջ քրիստոնեայ մը չէ մնացեր:

Ներբեն գաշտի կոտորուած և այրուած գիւղերն ասոնք են, զօրս հաւաստի աղբիւրներէ լսած և տեղեկացած եմ:

1 Պաշխա. 2 Քընեամթ. 3 Հիւսէյնան. 4 Ապոյ. 5 Մերալինան. 6 Զըռքը. 7 Գուրեշան. 8 Խըմըրհասար. 9 Սալըքան. 10 Հաճիճան. 11 Խոօճան. 12 Կունտէճանայ. 13 Պամափալայ. 14 Տէրքը. 15 Խոշական. 16 Ըլբալնի. 17 Թըրպէսորփի. 18 Հելեն. 19 Ագջա. 20 Պըլպէշ. 21 Խավշան. 22 պաշպէշիւք. 23 Ֆէրան. 24 Զէրե. 25 Հաշտար. 26 Զընչէն. 27 Հալտայ. 28 Գըմճօք. 29 Պարհանս. 30 Պամէյտան. 31 Տիրուն. 32 33 Հառուն. 33 Հասնայ. 34 34 Պայեամթի. 35 Զէրո. 36 37 Պաշմը. 37 34 Հաճիճէրզ. 38 37 Պարմուլայ. 38 39 40 Կունտէճանաց. 41 Պառիթ. 42 Պարէիսահան. 43 44 Սլտին. 44 34 Պահըք. 35 45 Պատըքանէքէլ. 35 46 46 Խէչմէն. 47 47 Զաքայ. 48 Ալանեայ. 34 49 Պաշքէօյ. 50 Սուրըքան. 51 2աթմալ. 34 46 Պարհապատ. 53 Փօրիշան. 54 46 Պարըքէ, 55 Շէրէֆեկան. 56 Պօշաթ. 57 49 Պաշքէօյ. 58 58 Լէրքը. 59 Կունտէճան. 60 62 Ներբեն 8անութ. 63 Ըլբըսմըլը. 64 Պաշտարի. 65 Խոսյին. 66 Սիսուն. 67 Հէլմէդին. 68 Խօհան. 69 Պըրէմիրան. 70 Զըրմըլ. 71 Պիլէյտըլ. 72 Բաղուրը. 73 Բարըլ. 74 Վերին քէֆէրճու. 75 Ներբուրը. 66 Քէֆէրճու. 76 Քըրէրի. 77 Փասորկ. 78 Մէշինան. 79 Խըմըրը. 34 80 Հըմիսանէ. 81 Պօշաթ. 82 Իրայ. 34 83 2ախէկ. 84 2օմանեկ. 85 Քո-

Խան. 86 Տըմսըրիկ. 87 Մէլձրն. 88 Փալօնեկ. 89 Հըղհըզ. 90 Ճքան. 91 Աէչէրտան. 92 Կուլէմսուեն. 93 Բըրզանձէ ժօրին. 94 Բըրզանձէ ժէրին. 95 Մըլքֆան. 96 Մամլայ. 97 Ճըզնի. 98 Սըպէեկ. 99 Բառնըզ. 100 Կրէչասան. 101 Բէմբը. 102 Հըրֆաս. 103 Բաճըֆթ. 104 Ալչօք. 105 Խօքեն. 106 Հըղնամեր. 107 Թըլիրեկ. 108 Տարի. 109 Ճէնէսքէր. 110 Հօփ. 111 Տառւսաւթք. 112 Հըմզարի. 113 Խոդուք. 114 Մալանաս. 115 Թըլքբէդ. 116 Անիքը. 117 Փէքէնտ. 118 Առանձ. 119 Հաղոյ.

Ճէի աւանը իր Սառնիս և Օփում երկու մեծ գիւղերով 7 քահանայիք և եկեղեցեր բռնի խամաց ըրած և թէլֆատած են. Իսկ Ճէի հետեւալ գիւղերն՝ որք են, Մալախովմայ, Գումէ, Աղքան, Այնթաղ, Ըըմշըմ և Հարպախոլն, որէ կանցնեն, կը կողոպտեն և կարեն.

Ճէի մօտ գտնուող Մակարայեցւոց վանք իր մէջ շրջականներէն եկած ապաստանած 2000 է աւելի մարգիկներով որէ կանցնեն. վանահայր Տ. Վահան քահանայն կ'սպանեն և վանքը կը կողոպտեն և կայրեն:

Խակ ասոր մօտիկ եղող Խոսրուց Ս. Աստուածածին անուն վանքը որէ կանցնեն և կը կողոպտեն:

Ներքին գաշտին պատկանեալ հետեւալ գիւղերն ևս ճընօփի, Փիրաման, Աըրէսաւաթ, Խնճիր, Քըֆըրմին, Տարուլ, Պաշներ, Հայտարեքան, Մարան, Կուլամիրայ, Շէրալ, Պայեկ, Հոռուով, Ելման, Ելիսան, Թըրձըլ, Դաստըլայն և Տառտալ, որէ անցուցած, կողոպտած և այրած են:

Խակ Հայնէ աւանն իր Տըպնէ, Քարազեկ, Ճումայ և Սարտէլ գիւղերով որէ անցուցած և կողոպտած են. Տիարեկերի կուսակալութեան ենթարկեալ հետեւալ գաւառներն ևս, որք են.

Սէվէրէկ, Արզնի իր բարձրահայեաց Ս. Աստուածածին վանքով Եկել, Ֆէրմուկ, Միքու և Ագել աւաններն ևս որէ անցուցած և կողոպտած ու այրուած են. Նոյնպէս Մարտին քաղաքը իր կամումկ քրիստոնեաններով ջարդած և կողոպտած են:

Թ. Բաղշոյ կուսակալութիւն.

Բաղշոյ քաղաքը որէ անցուած և կողոպտուած իր շրջակայ գաւառներով և գիւղերով, որոց անուններն են:

1 Խուլմիկ. 2 Մուձկանես. 3 Կէշնօք. 4 Կէտր. 5 Պաս. 6 Խոսին. 7 Ծղվամ. 8 Վանեկ. 9 Սառեկ. 10 Շէն. 11 Սափ. 12 Անդ. 13 Տօփ. 14 Տաշտօփ. 15 Որձակ. 16 Սափ. 17 Կել. 18 Կարփ. 19 Խումա. 20 Կութ. 21 Խորզէլ. 22 Խորթ. 23 Հըլքան. 24 Սընտեան. 25 Գութ. 26 Մէղրէ. 27 Փազէն. 28 Պօր. 29 Կաման. 30 Չուար. 31 Խոհրէվ. 32 Ալամէք. 33 Զըհոր. 34 Շամիրամ. 35 Փարխանդ. 36 Ամբ. 37 Կորփու. 38 Խմելջուր. 39 Աերին Մարգորդ. 40 Ներքին Մարգորդ. 41 Հօրմիկ. 42 Յարգոդ. 43 Հարգամ. 44 Խնդորգեն. 45 Թուխ. 46 Գրիու. 47 Խուլեկ. 48 Համաշտին. 49 Ագրոկ. 50 Մատնավանք. 51 Ռորդնք. 52 Ծղակ. 53 Հերսօնք. 54 Թեղուտ. 55 Աղաղ. 56 Տափա վանք. 57 Մէծք. 58 Կոշտեան. 59 Սոխուրդ. 60 Ճզերք. 61 Կծուակ. 62 Ծաղկէ. 63 Կամուրջ. 64 Խարապշենք. 65 Սփաւածոր. 66 Խաղեկ. 67 Կարփ. 68 Բրուգք. 69 Մզակ. 70 Որձենք. 71 Կղեն. 72 Մէլիթաղ. 73 Հաւութաղ. 74 Խուր. 75 Աերին Ասպնջեր.

76 Կերբին Ասպնջեր. 77 Կնծու. 78 Մցու. 79 Քաշաղ. 80 Մէծձնոր. 81 Մրցանք. 82 Բողնուաւ. 83 Շեն. 84 Արփի. 85 Նեճ. 86 Կրիս. 87 Ալպէրթ. 88 Պարուկան. 89 Երեսթաղ. 90 Օխնախ. 91 Զընէր. 92 Սամսուաւ. 93 Բալքան. 94 Կոտում. 95 Եկքանիշ. 96 Հէզ. 97 Սարիխաչ. 98 Խիարթան. 99 Աւանուաւ. 100 Խարչիթ. 101 Անքանոր. 102 Աւագ Թաղ.

Այս վերոյիշեալ գիւղերէն ոմանք որէ անցուած և կողոպտուած և ունակ միայն կողոպտուած մաս մ'ալ բռնի յիալամութիւն դարձուած քահանայիրք և եկեղեցեալ:

Նիզանի բազմաթիւ գիւղեր կողոպտուած. որէ անցուած, աղջկունք և կանայք առեանգուած և շատ մը ընտանիքներ բռնի մահմետական ըրած. Եկեղեցիք աւերտած և սրբութիւնք ոտից կոհան եղած. Ս. Խաչ և Գամազիկ վանուց վանահարք սոսկալի տանջաներներով և վանքերն կողոպտուած:

Սղերտ քաղաքը անգիթարար որէ անցուած. Խանութիւններ և տուններ կողոպտուած. Կանայք և աղջկունք առեանգուած. Առաջնորդարանի, Դպրոցի և Եկեղեցւոյ գուներ խորտակուած կողոպտուած. Քահանայ, դասատու, առաջնորդի սպասուոր սպաննուած. առաջնորդական տեղապահ Տիմոթէոս վարդուպիտ Տիմիրելիեան մահմետ վիրաբերալ և մասցեալը բռնի մահմետական ըրած և այս ամէնը ամենալիրը և ամենալիյրագ արարուածներով:

Սղերգի երուն սահիէյի հետեւալ գիւղերն որք են. Սարուս, Ավեն, Եվափ, Նաբային, Աէրմէմի. Տէրիփ, Կէնձէկ, Սեղեակ, Չում, Պուխ, Մէղրէ և լն. որէ անցուած. Կանայք և աղջկունք առեանգուած. մաս մը սար ու ձոր փախած և ցրտէն ու անօթութենէն մեռած ևս մասցեալը և քահանայիք և եկեղեցեր բռնի մահմետական ըրած:

Սղերտի Ծիրվան գաւառի հետեւալ գիւղերն որք են Մարէն, Գուրենա, Կունգէկէնա, Կիկան, Մինար և լն. բոլորովին կողոպտուած. մեծ մասը որէ անցուած. կանայք և աղջկունք առեանգուած. մաս մը ցրուած և ցուրտէն ու անօթութենէն մեռած, և այլք բռնի խսլ ըրած:

Սղերտի շրջակայ գիւղերն Խանըք, Սուլան, Կըրէշէնց, Տուսաւաք, Մըլքիսիալդ, Գանիսօրըք, Հըմանուայ, Գուշանայ, Վասըլի, Սելիամար, Անրին Սուլան, վերին Սուլան. 2օփ, Մէղրէւըչ, Պաղիմն, Կեր, Եըրք, վեր, Եըրք, ճինապէկ, Զէուք, Կեր, Սիլան, Աեր, Սիլան, Բլուր, Հաւէփի, Պինարին և Եղնամիր, այս գիւղեր կողոպտուած. որէ անցուած և մասցեալը բռնի մահմետական ըրած:

Ենախիպան գաւառակ գտնուած գիւղերն Աէլհօք, Թէխերի, Բամիկ, Էրտէրտք, Թըրպէսր, Զէրփաս, Ռամապատ, Պաճուտ, Մէլիքքա, Ճելտիքա, Խուլըք, Խաշըք, Մէլիքիքի, Խափք, Զընկովըք, Պիմեր, Խաշտար, Հէլմա, Պաշուրըամ, Մէլէշաչ, Պնունէկ և Տիրա. այս գիւղերն ևս կողոպտուած. որէ անցուած և այրուած. մաս մ'ևս բռնի խամաց ըրած են:

Կինմիթի պատկանեալը.

Ի Ճապաղջուր. 2էվլիկ, Մատրակ, Աևոր, Տարպասան, Խնակ և Տըք գիւղեր.

Կինմիթի շրջակայ. Կըրնօզ, Տիշչալան, Վահըր, Տեարիփօկ, Զայենին և Քուփար գիւղեր.

Ի Պէզար գաւառակի. Պէչար, Իլի, Աորշէն, Մուրգարիկ, Անտիւ և Մզակ գիւղեր.

Այս գիւղերու մէջ տեղ տեղ սրածութիւնք եղած, ամբողջ գիւղեր կողոպտուած, մնացեալ մեծ մասն բանի խամամ ըրած և եկեղեցիք մզկիթի վերածուած:

Ի իինձ ի Մանաշկութ գաւառակի. Պօլիան, Խարապէ, Հասանպէկի ձոր, Պայրաման, Անկար, Նորեկ, Բողի, Փարիսու, Կծու, Ճամփնուտ գիւղեր ամբողջ կողոպտուած, ոչխարէ տաւարէ և ապրուտէ խսպառ զրկուած:

Ի Խուլք և ի Խիխն գաւառի. Կիշերգան, Ահարոնք, Ընձքար, Էյուպ, Կամբէ, Շողէք, Խորեճ, Թեղու, Հըմբէրք, Փասուր, Մաշտակ, Ընկուղնակ, Էշխնձոր, Սէվիտ, Արտկուն, Հեղին, Սաղտուն, Փառկայ, Արսոք, Կրէմօրի, Պահամոյ, Ճռւմարայ, Պերմ, Բացի, Արինծն և Տանձ և Կրէխօրի:

Այս գիւղերն բոլորովին կողոպտուած և ամեն տպրուստի միջոցներէ զրկուած, տեղ տեղ մարդասպանութիւններ եղած և քանի գիւղեր վառուած, ասոնցմէ վեց գիւղ՝ որք են, Սաղտուն, Փառկայ, Արսոք, Կրէմօրի, Կրէխօրի, և Պահամոյ բոլորովին աւերակ և ժողովուրդք փախած այրեր ապաստանած են, թէ այս վեց գիւղեր և թէ մնացեալներն որովհետեւ ապրուտէ զրկուած են և ուրիշ կողմէ փախչելու ճար ու հնար չունին, անշուշտ այս ձեռու անօմութենէ ամրողն ալ սպամահ պիտի ըլլան, եմէ տեղէ մ'օգնութիւն չասնի իրենց:

Ի Մոլշ քաղաքի.

Մշոյ մէջ գտնուող ստորին կարգի իսլամք յանկարծակի յարձակելով շուկայի մէջ գտնուող հայոց վրայ, վեց մարդ սպանեցին և ՅՈՒ աւելի վիրաւորեցին, սակայն նորհիւ Անդլիական գեսպան Մըսթք Հէմբարնի և Մշոյ արդի բարեսիրտ կառավարչին կոտորածի առաջքը շուշ առնուեցաւ:

Մշոյ վանքերէն Ս. Կարապետի և Ս. Ցովհաննու վանից ոչսարներն յափշտակեցին տարան գիւղեր, իսկ Մատնավանք բոլորովին աւերակ դարձուցին:

Ի Չուխուր գտնուած գիւղերէն Ապըլպուհար Հացիկ, Դէմիկի, Երիքակ, Դրմետ, Առնիստ, Վարդենիս, Աւշտամ, Առաջակ, Երգավանք, Արդիլու, Մշուշիստ, Վարդագոմ, Քրտագոմ, Բքլից և Մուշշաղչէն գիւղերն:

Դաշտի Գիւղերէն.

Զիարէթ, Սորգար, Մեղդի, Պաղու, Բազու, Պայտի, Հերկերս, Գումս, Ազրան, Խաշխաշտաղ, Խորեր, Տատրսու, Ծխայու և Տէրըք, գիւղերն կողոպտեցին և տեղ տեղ առևանդութիւններ ըրին, Պուլանուսի գիւղերէն, Կոր, Խարապշահար, Փիրան, Քաքարլու, Լամար, Բլուր, Մերպար, Ծէլսաղուպ, Մէճնըրլու, Ծէրփանչէն, Համդաշէն, Խարշալեղ, Բքգաշէն, Կողակ, Եղբակ, Խօշկելդի:

Այս գիւղերու ոչխար տաւարներն յափշտակած և տեղ տեղ մարդասպանութիւններ ըրած, որոց կարգէն է Լզեցի Աւոն էֆ. Մագսուդեան և լի:

Պօլսերնակ պանդուխտներն անցեալ հոկտեմբեր ամսոյ սկիզբներ ի մայր եկեղեցին հաւաքուելով յուսահատարար կորոշն խմբովին ի Բ. Գուռ:

Դիմել և խնդրել որպէս զի կամ ծրագիրն վաւերացնեն և կամ իրենց գաւառացի եղբարց նման զիրենք ևս մահացնեն, Կայսերական կատավարութիւն ինդըրոյն ուրիշ գոյն տալով բացարձակ հրաման արձակեց իւր զինուորական զօրութեան և հարիւրաւոր պանդուխտներ ի սուր, ի հուր և ի բանա վիճացնելով որ Եւրոպական թէրթեր մեղապարտ հոչակած են զհայեր իրենց այդ ընթացքին մէջ և զինքը ջատագոված են. ատէկէ օգուտ քաղելով մինոյն հրամանը գաւառներն ևս արձակեց և մինչ միամիտ խեղճ հայերն իրենց վաճառատանց և արուեստանցներու մէջ կզրացէին, զօրքեր համարիաներ, աշերեթներ և համայն մահմագական թէրթեր մեղապարտ հոչակած են զհայեր իրենց այդ ընթացքին մէջ և զինքը ջատագոված են. ատէկէ օգուտ քաղելով մինոյն հրամանը գաւառներն ևս արձակական թէրթեր մոխիր գարձուց և հոս ու հոս փախչողներ ու աղատուողներն ալ բռնի իսլամը ընել տուաւ և ինդղինքը Եւրոպայի առջև արդարացնելու համար կեղծ չնորհակալեաց գրեր հրատարակեց թէ ամեն տեղն ալ հայերն են որ տեղիք տուին այս խոպութեանց և տեղիք տուողներն ալ պատժուեցան են:

Երկրաքարշ ցանկութեամբ տոգորուած մահմագական կրօն՝ որ հայու կեանքը բառնալն, անոր պատիւն արատաւորելն, անոր ննչքն ու ստացուածքը իւնել յափշտակել և իւրացնել արգարութիւն կը համարի իւր մոլի և ապականեալ ինկարիուն և ի հաներեծեան, և գարշելի գարձատրութիւններ կը նոստանայ անոր, այնինիս չար զգացում մը ներշնչած էր իւր պիղծ հետևողաց որք արդէն սոյն բարեդիպութեան կապասէին, ուստի և չինայեցին հազարաւոր պատռական երիտասարդներ ու մանուկների ներկել ու թաւալել իւրեանց բոսորատիպ արեան ճապաղեաց մէջ. չննայեցին գաւաղանին վրայ յեցող անկար ծերունոյն չննայեցին անկողնի մէջ և թոնիրի շուրջ գուուած կիսամեռ պառաւներուն. չննայեցին յդի կանանց, հրապարակաւ նոցա որովայնը ճեղքելու և գազաններ անոնց վրայ արձակելու, և այս իւնելու ի բայու տեղի ունեցած է, 2ինայեցին մանկամարդ կանանց և մատատ օրիրդաց, զանինի միան կանի իւնելու յանուան շատերն ալ բռնի իսլամական կոնսն մէջ ձուկելով, Սակայն եղան շատ մը ընտիր երիտասարդներ և մարդիկներ, պարկեշտասուն տիկնայք և աղջիկներ ալ, որք իրենց երկնային սուրբ կրօնն ու պատիւն անարատ ու անեղջ պահելու համար, յանձն առն ամէն կերպ տանջանք և նոյն սրբութեան մէջ մեռան պակելով Հայտատանեայց Ս. Եկեղեցին նորանոր մարտիրոսաք և ընտրելագոյն նահատակօք:

Այս ընդհանուր կոտորածէն միայն զերծ մը նացած է Տարօնյ աշխարհն, Այսու ամենայնին, ամէն օր ամէն վայրկեան նորանոր սպառնալիքներ և կոտորածի վասնէներ անպակաս են, և ամենաթեթե պատճան մը բաւական է քիչ միջոցի մէջ Տարօնն ևս աւերակաց կոյտ մը գարձնելու, բայց ժողովուրդք ամէն մասամբ զգոյշ է և տեղիք չտար

Տեղ, կառավարութիւն, ինչպէս ամեն տեղէ, մեղմէ ևս չնորհակալեաց գրեր բռնի կերպով առնելու ջանից մէջ է, Մինչև ցարդ ընդդիմացած եմք և որոշած եմք չնոյնունն իրենց այդ առաջիկը. զի կը մտածեմք թէ ի՞նչ բանի համար

շնորհակալ լինիմք, պյաջափ սրածութեանց, աւարտութեանց, առևանգութեանց, սրբազնութեանց, առաջական կրօնափոխութեանց կամ ո՞ր մէկ չարեաց համար. այ կը կատկածեմք թէ սորա չար հետևակը միայն մեր անձի վրայ չկայանայ) այլ ընդհանուր լինի:

Աերջապէս Տարօնյ աշխարհն ևս խիստ քանագառոր դրից մէջ է, երկուստեք սուր և հոր կը սպառնայ իրեն, և յարաժամ կը տառանի ընդ մէջ կենաց և մահաւ:

Ժողովուրդն ակնապիշ և անհամբեր յուսոյ և յուսոյ կապահ և ոչինչ չերսիր, և եթէ Աստուած մի արացէ այս խնդիրն շատ երկարի, կամ մինչև գարուն երթայ առանց օգտակար վախճանի մը յանդելու, աներկրայ լինելու եմք թէ Տարօնյ Հոգեհանգիստն ևս պիտի կարգացուի ի լրումն հայութեան:

Ահա այս է մեր վիճակն ու դրութենք, կաղաքնեմք, կը պազատիմք արասուալից դիմոք, գլացէք այս մնացորդ աիմը ժողովրդկան վրայ և եթէ հնար է, մի խնայէք զայն ամող ու լափող բոցին ու կրակին վրայ կուց մի ջուր սրսկել, նոկ եթէ հրգեհի առաջքը շառնուի, շատ չանցած Տարօնն ու մնացեալ հատ ու կոտորներն ևս դոհ պիտի լինին բռնութեան

1895 գեկտեմբեր 26:
Հ Տարօն - Մուշ:

Պ Ա Ր Ս Կ Ա Հ Ա Յ Բ.

«Երարատի» աշխատակից պ. Ա. Հայկունին կարգահետա վերիլ և անօսէ ս. Թագէի առաքելոյ գանուց Մակուայ նահանդում և ուղերձուեցաւ իւր պատշոնատեղին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՍՔ.

ՔԱՂՈՒԱԴՐԻ Ի ԿՈՆԴԱԿՈՅ Վ.ՀԱՅԱԳՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ Յանուն Սինօդին ս. ՀՀմիածնի թ. 1153, որով առաքի ի պահ ի գանձարանի Մայր Աթոռոց տուն մի հինգ հազար բուրդոյ 4% պետական ռենտացի սերիա 162, № 309, զոր նուրիեալն ժառանգք հանգուցեալ յրիգորի Թումային բագուեցոյ, վասն պահպանելոյ տոկոսիք նորա որդեգիք մի ի Հոգեոր Շեմարանի ս. Աթոռոց:

— Օրհնութեան յանուն Աւագ Յանուառեական Ծղուարգայ գեղջ և չորից աւազանեաց անդույն թ. 1154:

— Յանուն Սինօդի ս. ՀՀմիածնի թ. 1160, որով կարգի 8 Մակուան վարդապետան Ծիրակունի գանահայր Անուոյ, ի անդի 8. Հմայիակ վարդապետի 8. Յարութիւնեան:

— Յանուն նորին թ. 1161, որով 8. Յովհաննէս վարդապետն կարգի ի պաշտօն Փոխանորդութեան Ալեքսանդրազօլու:

— Հաստատութեան Հոգարարձութեան գործին ս. Համբարձում եկեղեցոյ նոր Նախիջևանի թ. 1165.

— Օրհնութեան յանուն գերգայ քեանդարեան Ալեքսանդրազօլու թ. 1192:

— Օրհնութեան յանուն օր. Թուշիկի Տարախեան թ. 1238.

— Յանուն 8. Մեսրովի վարդապետի 8. Մովսիսի անուանութեան օրով հաստատի ի պաշտօն անսչի Հոգեոր Դաղանցոցին Հայոց Շուշոյ, թ. 1246.

— Յանուն 8. Յովհաննէս վարդապետի Շիրակունոյ, որով կարգի ի պաշտօն Փոխանորդութեան վիճակին Հայոց Ալեքսանդրազօլու, թ. 1250.

— Յանուն Սարգսի Հայկունոյ, որով կարգի ուսուցիչ Դարեվոնից ս. Թագեկի վանից Մարգուար, տեսուչ զպրոցաց Հայոց ըրջակայ զիւղօրէից և կառավարիչ կալութեոց վանից թ. 1272.

— Հաստատութեան Հոգարարձութեան միգաւան դպրոցի ս. Աստուածածին եկեղեցոյ Թելաւ քաղաքի, թ. 1292.

— Յանուն 8. Յովհաննէս քահանայի Սարքեան Խարասութաղարի որով Հորհին նմա պատիւ. Աւագ քահանայութեան, թ. 1293.

— Յանուն 8. Մտեփան վարդապետի Շիրակունոյ, որով կարգի ի պաշտօն վանահայր Աթոռի անուանութեան ս. Հուսաւորիչ եկեղեցոյ Աւագ թ. 1310.

—————
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻՅԱՆ

ԲՈՎԱՆԴԵԿԱՆԻ ԹԻՒԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ — ԲԱՐՁՐԱԿԱՆ,

1. ԱՆՄԾ. Մանապարտ	4. Վ. Ա.	395
2. ԱՊՕԹԻ. ՄՈՒ. (Թարգմ.)	5. Վ. Ա.	395
3. ԵԿԵՂԵՑՎԱՆ ԶՐՈՒԴՈՒՆ		400

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ — ԲԱՇՄԱԿԱՆ,

4. Խաչի Անքոյ	8. ՑՈՒՑԱՆԻԲԱՆ	403
5. Պարթէննարք Պարակատանում	Ն. Զ.	406

ՄԱԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԱԿԱՆ

6. Ժողովրդական համալսարաններ		409
7. Մամին վահանաւալ Պատկեններ Ծիրակի գիւղական կենսների. Ա.		410
8. ՄԱՐՄԱՐՈՒՐ		415

ԱԶԳԱԿԱՆ

Հայկական Խնդիր		417
10. ԵԿԵՂԵՑՎԱՆ ԱՎԱՍՏԱՆՆԱՅԻ		418
Մայր Աթոռ.		
ՈՐՈՇԱԿԱՆ		
ԲԱՍՏԱՐԱՋԻ ԹԵՄ.		
ՑԱՅՑԱԿԱՆ		
ՊԱՐՄԱԿԱՆ		

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ Ք

ՈՂԱԿԱՆ ԱԿՈՒԹԻՒՆ
ԵՎԱՆԴԵԼՈՒԾ.

Ազգական գեղոսի աղթիւններից 4. Տ. Մկրտիչան
ՄԱՅԵՆՆԱՌՈՒՌԻ ԽԱՆԻՆ.